

ճառը . Բ . կնոջ ստեղծ և Յիսուսին առաջադրանքը յայտնելը . Գ . կնոջ հաւատքը եւ աղօթատեղւոյ մասին առաջիկայ տուած հարցումը . Դ . առայս Յիսուսի տուած բացատրութիւնը և իւր Աստուածութեան յայտնութիւնը առ կինն . Ե . Յիսուսի աշակերտաց զարմանքը սոյն տեսութեան վրայ :

(Շարունակելի :)



ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱՂԷՏՆԵՐ

Կարելի է թէ ընթերցողք կարծեն , որ ներկայ պատերազմի տխուր հետեւանաց վերայ պիտի խօսիմք , որոց ենթարկուած է համայն Թուրքիա . բայց մեք այդ առօրեայ պատերազմէն աւելի սոսկալի մի պատերազմ պիտի ցուցնեմք , որ քան զառաջինն աղէտալի է , քան զառաջինն աւերիչ եւ քանդիչ : Այս պատերազմը ժողովրդեան տգիտութիւնն է , որ աղբիւր է բարոյական և նիւթական ամեն աղէտից եւ ամեն թշուառութեանց : Առաջնոյն մէջ՝ դեմքնիս թշնամի մի կայ , որ մեր իրաւանց , մեր հայրենեաց և ազատութեան կը սպառնայ . որով մեք իբրեւ զաւակ երկրին , իբրեւ իրաւանց տէր և իբրեւ մարդ՝ ազատութեան սիրահար , կը ստիպուիմք զէնք առնուլ և թշնամոյն գլխադրաւել , կամ յաղթահարել եւ կամ նահատակիլ ազատութեան , իրաւանց և հայրենեաց եռտաշնեայ սեղանին վերայ . իսկ երկրորդին մէջ մեք եմք մեր թշնամին , մեք մեր անձին գէմ կ'ոգորիմք , մեր իրաւունքը

մեր վատ ու ետական կրից կը զոհեմք . մեր մանկուոյն բարոյական և նիւթական հացը անոր ձեռքէն ուրեքնէն կը խլեմք . վերջապէս կը զոհեմք զմեզ , կը զոհեմք ընտանիքը և կը զոհեմք մատաղ սերնդեան ապագայն առանց սոսկալու անիծից այն շանթերէն , որով ապագայն զմեզ պիտի հարուածէ , նախատանաց այն սեւ դրոշմներէն , որք մեր ճակատը պիտի դրոշմաւորեն իրր յաւիտենական դատապարտութիւն :

Այս օրինակ մի պատերազմ , որ մեր ազգին նման ազգերու քաղաքական պատերազմը կը համարուի , շատ պատճառներէ յառաջ կը գայ , բայց ամենամեծ պատճառ համարուած է մեր ազգին համար Առաջնորդական ինքի ըսուածը : Կարելի է ըսել , որ վերջին տարիներուս մէջ մի գաւառ չը մնաց ազատ այս աղբալիս ինքոյն հետեւաններէն . գաւառ չը մնաց , ուր համասեռ , համաըրիւն և համազգի եղբարք՝ իբրեւ գաւառոր արեանարբու թշնամիներ զիրար նախատած , զիրար մրտած , միմեանց պատիւը , իրաւունքը ոտնակոխ ըրած չըլլան : Ուստի՞ յառաջ կը գան այս ամեն չարիքները , - Առաջնորդի մը փոփոխութենէն : Առաջնորդք մեծ մասամբ իբրեւ անձնարած հովիւներ՝ երբ գաւառի մը հասարակութեան հովիւ կամ տեսուչ կը կարգուին , փոխանակ ըստ կոչման եւ պարտաւորութեան՝ ժողովուրդը մի եւ նոյն հայրական սիրով և համակրութեամբ սիրելու , խախնելու կը գնեն . զանոնք , որք աւելի յոյս կը տան իրենց փորն ու քսակը լեցնելու , կը խնկարկեն և աւանդ կամարար դործիներն կ'ըլլան . հասարակ ժողովուրդը կը նեղուի եւ կը տառապի , փոյթներն չէ . ժողովուրդը կ'ողբայ , կ'արտասուէ , անոնց սրտին վերայ կ'աթիլ մը չլնար . եւ

չառ անգամ 'ի շնորհակա քսակապա-
րար աղաներուն՝ Առաջնորդը կը տաղ-
նապեն և կը հարստահարեն ժողովուր-
դը . ինչ ընէ խեղճ գիւղացին . ամ-
բողջ տարին չարաչար աշխատելով ,
ամառան և ձմեռան անըմբերելի խրա-
տուլթեանց գլուխ խոնարհեցնելով՝
հազիւ ուրեմն կարող կ'ըլլայ իւր ըն-
տանեաց օրապահիկը ճարել . ուստի
գտնէ , սր Առաջնորդ հայր սուրբին
տայ . որպէս զի իրեն ալ հայրա-
կան աչքով ու սրտով նայի , որ-
պէս զի իրեն տառապանաց ժամա-
նակ մի քանի միտիթարական խօսք խօ-
սի . չունի , որ տայ , ուստի և կը զըր-
կուի այս մեծ բարիքներէն . Ժողովուր-
դը իսպառ ճարահատեալ՝ Ազգ . Վարչ-
չուլթեան գծոյն եւ կարեկցութեան
կը դիմէ , բողոքոյ ընդարձակ մահօե-
րադրութիւններ մի գլխի միւսոյ կը
հասնին 'ի Պատրիարքարան . հազիւ
Վարչութիւնը կը կարգայ տոնք , ու-
րիշներ կը գան Առաջնորդի կուսակից-
ներէն . եթէ առաջինները Առաջնորդը
իբրեւ հարստարիչ , իբրեւ վարձկան
կը նկարագրէին . երկրորդ մահսերնե-
րը՝ իբրեւ բարերար եւ անձնագիր .
Պահ մի կը տատամսի Վարչութիւնը
այս երկու սուրին մէջ . ամիսներ եւ
տարիներ կ'անցնին , Ժողովուրդի տաղ-
նապը կը շատնայ . երկպառակութիւ-
նը կը սաստկանայ , կուսակցութիւնք
կ'ըստուարանան եւ կը տարրանան .
ամեն մարդ իւր գործը թողած այս
խնդրով կը սպաղի . երկրագործին հողը
անմշակ կը մնայ , արհեստաւորին գոր-
ծերն երեսի վերայ . գաւառական վար-
ժապետներն ալ , որ մեծ տեղ մի կը
բռնեն այս ճակատամարտին մէջ , իրենց
փեմ պարտաւորութիւնը մէկ կողմ
թողով՝ այս կամ այն կուսակցութեան
գրագրութեան պաշտօնը կը վարեն .
երթալով խնդիրը ուրիշ գոյն ու կեր-

պարանք կ'առնու . Ժողովուրդը իբրեւ
վերջին յաղթանակ՝ կրտսանայ բաժ-
նուիլ իւր մայրենի Եկեղեցիէն . ըս-
պառնալիքը գործի կը փոխուի , խումբ
խումբ Բողոքականաց կամ Պապական-
նաց գիրկը կը դիմեն . ո՞վ կրնայ մե-
ռել , որ մեր ազգին մէջ կրօնափոխու-
թիւններն մեծ մասամբ այս խնդրէն
յառաջ եկած չեն : Ուր ուրեմն Վարչ-
չութիւնը կըսթափի , որոշում կ'ընէ
այս ինչ տեղոյ Առաջնորդը 'ի Պօլս
կոչել . կը հաղորդուի որոշումը . Առաջ-
նորդը պատճառանքներով կ'երկարա-
ձրգէ իւր երթը , վասն զի տակաւին
խաղալիք դրեր ունի , կը կրկնուի եւ
ստիպողականութիւն կը տրուի , բայց
որովհետեւ գիտէ գործին վախճանը՝
իւր օձիքը ազատելու ճարը կը նայի .
Առաջնորդն ալ իւր մարդիկներով
կամ Պապականաց և կամ Բողոքակա-
նաց կը դիմէ . գնացողները կ'երթան
և շատ անգամ անընկճելի յամառու-
թեամբ . բայց ո՞վ կը վնասէ . — Աղդը
և Եկեղեցին . ինչ է այս ամենուն պատ-
ճառը . — Հովուաց և հօտին տգիտու-
թիւնը , բայց ըստ մեզ հօտէն աւելի
հովիւք պատասխանատու են մարդ-
կանց եւ Աստուծոյ դատաստանին
առջեւ :

Ահաւասիկ մեր ամեն ըսածներն
հաստատող հետեւեալ կտորը , զոր
Խարբերթէն գրուած մի նամակէ կը
քաղեմք , Ազգ . Բարեխնամ Վարչու-
թեան խորին ուշադրութեան կը
յանձնեմք :

« Աւերորդ չեմ համարեր Խար-
բերթու Ժողովուրդեան կենաց հիւժեալ
պատկերը նկարագրել :

» Այսօր երկու տարի է , որ Ա-
ռաջնորդական ընտրութիւն կը ընի
եւ չը վերջանար . Ժողովուրդը չորս
կուսակցութեանց բաժնուած է , Պետ-
րոսեան , Ս . Ս . Ս . , Եղնիկեան եւ

չեղորք, որով ժողովրդեան կենսական ուժը բոլորովին սպառեցաւ և այսօր յետին թշուառութեան մէջ կը հեծէ. ո՛չ կարող է իւր օրապահիկ հացն ծաւել, և ո՛չ իւր կրօնից կամ ազգութեան վերաբերեալ ձեռնարկ մի ընել:

«Ժողովուրդը չունի ուսումնական եւ ազգասէր Առաջնորդ մի. չունի գործօն և խորհող Ժողովներ ձեռնա. հաս անձերէ բաղկացեալ ըստ Սահմանադրութեան Ազգին. չունի Եկեղեցեաց բեմերուն վերայ լաւ քարոզիչներ և ո՛չ դպրոցաց մէջ ընտիր ուսուցիչներ. ուստի ժողովուրդը խուռն բազմութեամբ Պապականաց և Բողոքականաց ժողովարանները կը դիմեն, նոյնպէս յմանկտին անոնց դպրոցները կը յաճախէ:

«Ստոյգ կ'ըսեմ, որ Ազգի հոգեւոր գլուխները եթէ չը փութան վաղ այս աղէտից առաջքն տռնելու, քիչ ժամանակէն, Խորբերթէն Բողոքական և Պապական Հոյ անունները միայն պիտի լսուին. որովհետեւ ըստ առաջին, «Փայլը մշուշոտ օրերուն կը ըսպասէ»:

«Քիչ գրեցի, շատ իմացէք. լուր ժամանակ չէ ժամանակը. Ազգը իւր նիւթական կեանքին հետ, նախնեաց ուղղափառ հաւատը եւ Ազգութիւնը կորսնցնելու վտանգին մէջ է»:



ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐԿԻՐ

Արեգակէն հաշուելով՝ երկիրը ըստ հեռաւորութեան երրորդ մասը լորակն է իրրեւ երկնային մարմին. ուստի հարկ է, որ Փայլածուի եւ Արուսեկի մանրամասն նկարագրութենէն յետոյ երկրի հողովական և թաւալական շարժումները, իւր ձեւը, բուն տարածութիւնները և բնական ընդհանուր կազմութիւնը քննեմք եւ ստորագրեմք: Երկիրը միջոցին մէջ առանձինն չը շարժիր, այլ իրեն հետ կը ձգէ Լուսինը, որ իւր շուրջը կը դառնայ, ինչպէս ինքը արեգական շուրջը. ուստի երկրի նկարագրութենէն յետոյ Լուսնոյ վերայ եւս պիտի խօսեմք, որ արեգակնային աշխարհը կազմող աստղային մէջ ամենածանօթն է մեզ իւր մերձաւորութեան պատճառաւ:

Եթէ երկիրը կը շարժի միջոցին մէջ երկինքը զարդարող անթիւ աստղաց նման, ամենէն առաջ այս խնդիրը կը ծագի, թէ՛ իրեն ամենամերձաւոր երկնային մարմնոց ինչ տեսքով կ'երեւի. ասիկայ կախումն ունի դիտողի հեռաւորութենէն: Երկիրը գրեթէ գնդաձեւ է, որոյ մէկ մասը արեգակէն կը լուսաւորի և միւս մասը մի և նոյն ատեն մթութեան մէջ կը մնայ: Որչափ հեռանայ արեգակէն, այնչափ փոքր կ'երեւի սիւսաւաակի ձեւով և փոքրիկութեան համեմատ իւր լոյսն ալ կ'առաւելու. որովհետեւ արեգական լոյսը՝ որ կ'անդրադառնայ դիտողին երկրի լուսաւորեալ կիսագնդին, կեդրոնացած պիտի երեւի եւս քան զեւս փոքր մոկերեւոյթի մը վերայ: Վերջապէս ինչ լուսներեւոյթներ, որ Փայլածուն եւ Արուսեակը կ'ընծայեն մեզ, նոյնը